

ՌԱԶՄԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԷԱԿԱՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Ռազմական ծախսերի դերը տնտեսական աճի ապահովման համատեքստում միանշանակ չի ընկալվում տնտեսագիտության տեսության մեջ: Դասական տնտեսագիտության ներկայացուցիչները դիտարկում են պետական ռազմական ծախսերը որպես տնտեսական աճի վրա բացասաբար ազդող գործոն՝ հիմնվելով ռազմական ծախսերի աճ-մասնավոր ներդրումների նվազում-ամբողջական պահանջարկի կրճատում մոդելի վրա: Որոշ տնտեսագետներ էլ ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացումը դիտարկում են որպես տնտեսական ռեսուրսների այնպիսի օգտագործում, որը երկարաժամկետ հատվածում չի նպաստում երկրի տնտեսական զարգացմանը: Ըստ այդ մոտեցման ռազմական ծախսերի ավելացումը մինչև ՀՆԱ-ի որոշակի մակարդակ հնարավորություն է ընձեռում կարճաժամկետում ստանալ որոշակի տնտեսական օգուտներ, որոնք սակայն, բավական սահմանափակ են, իսկ երկարաժամկետում նրանց ազդեցությունը չեզոքանում է: Այս մոտեցումներից յուրաքանչյուրը յուրովի ընդունելի է, սակայն լինելով տնտեսության յուրօրինակ ճյուղ, դրա ազդեցությունը մեծապես պայմանավորված է նաև երկրի զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացման արդյունավետությամբ: Այնուամենայնիվ, տնտեսական վերլուծություններում մատնանշվում են տնտեսական աճի վրա ռազմաարդյունաբերության ոլորտի դրական ազդեցության հետևյալ իրողությունները^{1,2}

- *Ռեսուրսների վերաբաշխում:* Պետական ռազմական ծախսերն ուղղակի և անուղղակի հնարավորություն են մասնավոր հատվածում ներդրումների աճի, ենթակառուցվածքների բարելավման և ամբողջական պահանջարկի խթանման համար:
- *Արտադրական շղթայի կազմակերպում:* Ռազմական ծախսերն ապահովում են տնտեսության տարբեր ճյուղերի միջև արդյունավետ կապ (կրթություն, ՏՏ, արդյունաբերություն)՝ հարմարեցնելով դրանք ռազմական ոլորտի պահանջներին:
- *Դրական էքստերնալներ:* Ռազմաարդյունաբերական համակարգի կողմից մշակված գիտելիքների և տեխնոլոգիաների դեպի մասնավոր հատված՝ քաղաքացիական նշանակության արտադրություններին փոխանցման միջոցով:

Տնտեսության վրա ռազմաարդյունաբերության ոլորտի ազդեցության ուղղությունները գնահատելու նպատակով ուսումնասիրել ենք ռազմաարդյունաբերության զարգացման հիմքով տնտեսական աճի էական ցուցանիշներ արձանագրած երկրների փորձը: Վիճակագրության ուսումնասիրման ժամանակ կարևորել ենք ոչ միայն ռազմական ծախսերի բացարձակ ցուցանիշները, այլև մեկ շնչին բաժին ընկնող ռազմական ծախսերը, ռազմական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին (քանի որ ռազմական ծախսերը մեծ ազդեցություն ունեն սոցիալական բեռի վրա), պետական ծախսերում ռազմական ծախսերի տեսակարար կշիռը, որի բարձր մակարդակը հանգեցնում է տնտեսության այլ ոլորտներում կատարվող ծախսերի նվազման, ինչպես նաև՝ ԳՀՓԿՄ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին, որի բարձր մակարդակը վերոնշյալ ցուցանիշների բարձր մակարդակների դեպքում ենթադրում է ռազմաարդյունաբերության ոլորտի արդիականացման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման/արտադրման հնարավորություններ:

SIPRI (Խաղաղության հիմնախնդիրների հետազոտման ստոկհոլմյան ինստիտուտ) հրա-

¹ J. P. Dunne and M. Uye. Defence Spending and Development. University of the West of England, 2007 p. 19.

² Smith, Dan and Ron Smith. Military Expenditure, Resources and Development. University of London, Birkbeck College Discussion Paper, No. 87, November, 1980.

պարակած տվյալների համաձայն¹, վերջին 35 տարիների ընթացքում պետությունները բացարձակ թվերով ավելացրել են ռազմական ծախսերը, մինևույն ժամանակ գրեթե հաստատուն պահելով դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում և պետական ծախսերի կազմում: Ռազմաարդյունաբերության զարգացումը որպես ռազմավարական ուղղություն ընտրած երկրների մեծամասնությունը (երկրները թվարկված են աղյուսակ 1-ում) տիրապետում են տնտեսական զգալի ռեսուրսների և ունեն ռազմաարդյունաբերական արտադրանքի իրացման մեծ շուկաներ: Որոշ երկրներում էլ՝ Իսրայել, Հվ. Կորեա, Սինգապուր, շեշտը դրվել է նոր տեխնոլոգիաների և մասնագիտացված ռազմաարդյունաբերական կառույցների զարգացման վրա: Այս երկրներում բնակչության մեկ շնչին՝ բաժին ընկնող ռազմական ծախսերը 2014թ.-ին 1.5-3 անգամ գերազանցել են 1990թթ. մակարդակը՝ նույն ժամանակաշրջանում արձանագրելով տնտեսական աճի բարձր ցուցանիշներ: Կարևորել ենք հատկապես այդ երկրների փորձի ուսումնասիրությունը որպես փոքր բաց տնտեսությունների՝ բացահայտելու համար ռազմաարդյունաբերության ոլորտի և տնտեսական աճի փոխկապվածությունները:

Իսրայել: Իսրայելի ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացումն ուսումնասիրելիս ուշադրության են արժանի մի քանի հանգամանքներ՝ արտաքին թշնամիների առկայությունը, տնտեսության չափերը, ռազմական և քաղաքացիական ոլորտների հարաբերակցությունը և տեխնոլոգիական զարգացվածության մակարդակը, որի վրա, ի դեպ, մեծ ազդեցություն է ունեցել տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակը: Ռազմաարդյունաբերության ոլորտի կայացման սկիզբը Իսրայելում 1950-ական թթ.-երն էին: Նախապես հիմնվելով նորաստեղծ պետական ընկերությունների վրա, արդեն 1950-ական թթ. կեսերից երկիրն ուներ հստակ գիտափնտվացիոն կողմնորոշում, ինչի արդյունքում 1958թ. հիմնադրվեց Իսրայելի ռազմաարդյունաբերության հիմնաքարը հանդիսացող Ռաֆաել ընկերությունը: Նույն ժամանակաշրջանում հիմնվեցին մի շարք հարակից ընկերություններ, որոնք կարճ ժամանակում վերափոխվեցին ռազմական տեխնիկայի արդիականացման կենտրոնների (օրինակ՝ Israel Aircraft Industry-ն)²: Մեծ ուշադրություն էր հատկացվում ռազմաարդյունաբերության ոլորտում բարձր տեխնոլոգիաների ներդրմանը՝ մասնավոր ընկերությունների հետ համագործակցության միջոցով, ինչի արդյունքում կայացավ այս ոլորտի ներկայիս ամենախոշոր ընկերությունը՝ Tadiran-ը: Ռազմաարդյունաբերության ոլորտում զբաղված աշխատողների թիվը 1950-1970թթ. աճեց շուրջ 20 անգամ³, իսկ ոլորտը վերածվեց Իսրայելի տնտեսության խոշորագույն ճյուղերից մեկի՝ ապահովելով ռազմական արտադրանքի արտահանման ծավալների շարունակական աճ: Զարգացման այս միտումները շարունակվեցին սառը պատերազմի ամբողջ ընթացքում: Ավելին, այդ ժամանակահատվածում Իսրայելի տնտեսության տեխնոլոգիական առաջընթացն ապահովում էին հենց ռազմաարդյունաբերական կառույցները, որոնք իրենց առջև խնդիր ունեին արտասահմանյան էմբարգոյի, սահմանափակ մարդկային և բնական ռեսուրսների պայմաններում արդիականացնել իսրայելական ռազմական տեխնիկան: Խնդրի արդյունավետ լուծումը պահանջում էր նաև բարձր կրթական մակարդակի ապահովում և բարձրորակ մասնագետների պատրաստում, ինչի վրա էլ հատուկ ուշադրություն դարձրին Իսրայելի իշխանությունները, և արդյունքում բարձրորակ կադրեր պատրաստվեցին նաև տնտեսության այլ ճյուղերի (այդ թվում նաև՝ ռազմաարդյունաբերության հետ համագործակցող) համար, ինչն էլ հետագայում նպաստեց տնտեսության ընդհանուր զարգացմանը: Փաստորեն, տնտեսության զարգացմանը զուգահեռ ռազմաարդյունաբերության ոլորտն այստեղ ոչ միայն չկորցրեց տնտեսության լոկոմոտիվի դերն, այլև ժամանակի ընթացքում ամրապնդեց այն:

Ինչ վերաբերում է ռազմական ծախսերին, ապա վիճակագրական տվյալները փաստում են, որ 1970-2015թթ. ընթացքում դրանք շարունակաբար աճել են տարեկան 8.6 մլրդ ԱՄՆ դոլարից հասնելով 17.5 մլրդ ԱՄՆ դոլար, ինչն ամենաբարձր ցուցանիշն է տարածաշրջանում:

¹ Հնդվածում երկրների ռազմական ծախսերի և ռազմաարդյունաբերության վերաբերյալ բոլոր տվյալները աղբյուրը www.sipri.org էլ. կայքն է, եթե այլ հղում նշված չէ:

² Dan Peled. Defense R&D and Economic Growth in Israel: A Research Agenda, Haifa 2001, p. 27.

³ Sharon Sadeh. Israel's Defense Industry in the 21st Century: Challenges and Opportunities. Strategix Assessment Volume 7, No. 3 December 2004, p. 31-40.

Ներկայում Իսրայելի ռազմաարդյունաբերության ոլորտն ընդգրկում է շուրջ 150 ընկերություն, որոնք, ըստ իրենց նշանակությամբ, կարելի է բաժանել երեք ենթադասերի՝

1. Խոշոր պետական կազմակերպություններ, որոնցից մի քանիսն առաջատար դիրքեր ունեն համաշխարհային շուկայում: SIPRI տվյալների համաձայն, իսրայելական ռազմաարդյունաբերության ոլորտի երեք ընկերություններ ընդգրկված են աշխարհի 100 ամենախոշոր ընկերությունների ցանկում՝ համապատասխանաբար 29, 32 և 43-րդ տեղերում: Նրանց համախառն տարեկան շրջանառությունը կազմում է շուրջ 9 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ դրանցում զբաղվածների թիվը 35,000 է: Հարկ է նշել, որ թեև ռազմաարդյունաբերության արտադրանքի շուկայում գործում է պետական մոնոպոստիա, սակայն արտադրանքի 70%-ը նեղ մասնագիտական որակների շնորհիվ ունի արտահանման կողմնորոշում^{1,2}:

2. Մասնավոր միջին ընկերություններ, որոնք հիմնականում թողարկում են ռազմաարդյունաբերական արտադրանք, սակայն բավական մեծ է նաև քաղաքացիական նշանակության արտադրությունը՝ հիմնականում հեռահաղորդակցության ոլորտում:

3. Նեղ մասնագիտացված փոքր և միջին ընկերություններ, որոնց արտադրանքն ուղղված է սպասարկելու ռազմաարդյունաբերության ոլորտի ներքին պահանջները:

Տեխնոլոգիական զարգացումների անընդհատությունը վերջին 50 տարիների ընթացքում ապահովեցին ռազմաարդյունաբերության ոլորտի՝ տնտեսական աճի վրա ազդեցության փոխանցման մեխանիզմների կայացմանը բոլոր ուղղություններով, մասնավորապես՝ ամբողջական պահանջարկի խթանումը դրական է անդրադարձել Իսրայելում գյուղատնտեսության, բժշկության և հեռահաղորդակցության ոլորտների զարգացման վրա: Իր ազդեցությունն է ունեցել նաև ՀՆԱ-ի կազմում ԳՀՓԿԱ ծախսերի մեծ տեսակարար կշիռը՝ մոտ 4%, որը Իսրայելում երկու անգամ գերազանցում է զարգացած երկրների միջին մակարդակը և այդ ցուցանիշով զիջում է միայն Հվ. Կորեային (տե՛ս աղյուսակ 1): Գիտության ոլորտին միջոցների հատկացումը սկզբնական շրջանում իրականացվում էր հիմնականում պետության կողմից, սակայն զգալի արտոնություններ էին տրամադրվում նաև մասնավոր ներդրողներին, մասնավորապես՝ ընդհանուր ԳՀՓԿԱ ծախսերի մինչև 50%-ի չափով դրամաշնորհներ էին տրամադրվում այն ընկերություններին, որոնք զբաղվում են տեխնոլոգիական նոս-հաունների մշակմամբ, մինչև 30%-ի չափով՝ քաղաքացիական ապրանքների արտադրության ոլորտում ինովացիաների կիրառմամբ ծրագրեր իրականացնող կազմակերպություններին և 20%-ի չափով՝ ռազմական արտադրանքի թողարկմամբ զբաղվող ընկերություններին: Ընդ որում, գյուղական համայնքներում իրականացվող ծրագրերի դեպքում հատկացումներն ավելանում են ևս 10%-ով:

Աղյուսակ 1

ԳՀՓԿԱ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին³

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
ԱՄՆ	2.51%	2.55%	2.63%	2.77%	2.82%	2.74%	2.76%	2.70%	2.73%	0.00%
Չինաստան	1.32%	1.38%	1.38%	1.46%	1.68%	1.73%	1.79%	1.93%	2.01%	2.05%
ՌԴ	1.07%	1.07%	1.12%	1.04%	1.25%	1.13%	1.09%	1.13%	1.13%	1.19%
Գերմանիա	2.42%	2.46%	2.45%	2.60%	2.73%	2.71%	2.80%	2.87%	2.83%	2.87%
Հվ. Կորեա	2.63%	2.83%	3.00%	3.12%	3.29%	3.47%	3.74%	4.03%	4.15%	4.29%
Բրազիլիա	1.00%	0.99%	1.08%	1.13%	1.12%	1.16%	1.14%	1.15%	1.24%	0.00%
Թուրքիա	0.59%	0.58%	0.72%	0.73%	0.85%	0.84%	0.86%	0.92%	0.94%	1.01%
Իսրայել	4.04%	4.13%	4.41%	4.33%	4.12%	3.93%	4.01%	4.13%	4.09%	4.11%
Լեհաստան	0.57%	0.55%	0.56%	0.60%	0.67%	0.72%	0.75%	0.88%	0.87%	0.94%
Մինգապուր	2.16%	2.13%	2.34%	2.62%	2.16%	2.01%	2.15%	2.00%	2.00%	2.19%
Շվեդիա	3.39%	3.50%	3.26%	3.50%	3.45%	3.22%	3.25%	3.28%	3.31%	3.16%

¹ Mark Broude, Saadet Deger, Somnath Sen. Defence, innovation and development: The case of Israel. Journal of Innovation Economics & Management. 2013/2 N12, p. 37- 57.

² Shefi, Y., Tishler, A. The effects of the world defense industry and US military aid to Israel on the Israeli Defense Industry: a differentiated products model, Defence and Peace Economics, 16 (6), 2005, p. 427-448.

³ Աղբյուրը՝ data.worldbank.org էլ. կայք:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ռազմաարդյունաբերության զարգացումը դրականորեն է անդրադարձել Իսրայելի բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման վրա, ինչի արդյունքում այսօր ԳՀՓԿԱ ներդրումների միայն փոքր մասն է բաժին ընկնում պետությանը, որը, սակայն, շարունակում է մնալ բարձր տեխնոլոգիական արտադրանքի հիմնական սպառողներից մեկը, իսկ ոլորտի արտադրանքի մեծ մասն ուղղվում է ռազմական կարիքների բավարարմանը¹:

Ինչպես արդեն նշել ենք, Իսրայելի ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացմանը գույժընթաց երկրում կատարելագործվեցին նաև կրթության, մարդկային կապիտալի և գործարարության բնագավառները: Իսրայելական բանակի կադրերը, հատուկ պատրաստություն անցնելով խոշորագույն տեխնոլոգիական կենտրոններում, զինվորական ծառայությունն ավարտելուց հետո հնարավորություններ էին ստանում իրենց գիտելիքները փոխանցել քաղաքացիական ոլորտ, ինչի արդյունքում իսրայելական ստարտափերի և Նասդաքի շուկայում ցուցակված ընկերությունների մեծ մասի հիմնադիրներն իսրայելական բանակի նախկին զինծառայողներ են: Իսկ օտարերկրյա, մասնավորապես ԱՄՆ-ի ներդրողները ներդրումային որոշումներ կայացնելիս նախապատվությունը տալիս են հենց այդպիսի ընկերություններին: Այսօր Իսրայելում գործում է շուրջ 4000 այդպիսի ընկերություն, որոնցից շատերը զբաղված են ռազմական տեխնոլոգիաները քաղաքացիական կյանքում ներդնելով (բժշկություն, հեռահաղորդակցություն, անվտանգություն և այլն):

Ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացումը մեծապես նպաստեց նաև Իսրայելի կապիտալի շուկայի զարգացմանը, որը մինչև 1970-1980թթ. թերզարգացած էր: Ինչպես արդեն նշվել է, ԳՀՓԿԱ ծախսերի ֆինանսավորման զգալի մասն իրականացվում էր պետության կողմից, որի շարունակականությունը արդյունավետ պահանջարկի խթանման հիմքեր ստեղծեց՝ դրական էքստերնալներ առաջացնելով ամբողջ տնտեսությունում, ինչն էլ իր հերթին նպաստեց օտարերկրյա կապիտալի ներգրավմանը, արտահանման ծավալների մեծացմանը և բարձրացրեց արժեթղթերի շուկայի կապիտալիզացիայի մակարդակը:

Ամփոփելով ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման Իսրայելի փորձի ուսումնասիրությունը կարելի է փաստել, որ այն մշտապես հանդիսացել է տնտեսության լոկոմոտիվ ձյուղ, որի շուրջ կառուցվել է Իսրայելի ժամանակակից տնտեսությունը: Պետական նպատակաուղղված քաղաքականությունը, ԳՀՓԿԱ ծախսերի դրամաշնորհային ֆինանսավորման մեխանիզմները և արդյունավետ պահանջարկի ձևավորումը դարձան այն հիմնաքարը, որը զգալիորեն նպաստեց տնտեսական աճին:

Մինգապուր: Ռազմաարդյունաբերության ոլորտը մշտապես համարվել է Մինգապուրի երկարաժամկետ զարգացման առաջնային գործոն, ինչն էլ պայմանավորել է ոլորտին ուղղված պետական ծախսերի մշտական աճը: Այսպես, 1970-ական թվականներին ռազմական ծախսերը լինելով ընդամենը 927 մլն. ԱՄՆ դոլար, արդեն 2000-ական թթ. կազմում էին 7.3 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2015թ. 10.2 մլրդ ԱՄՆ դոլար: Հատկանշական է, որ երկրի ռազմական ծախսերը աճել են ՀՆԱ-ին համապատասխան նշված ժամանակահատվածում, շարունակելով մնալ ՀՆԱ-ի 4%-ի սահմաններում, սակայն պետական ծախսերում տեսակարար կշռի նվազման միտումով (26%-ից մինչև 16%): Այս հանգամանքը հիմնավորվում է 1980-ական թթ. Մինգապուրի պաշտպանական համակարգի կառուցմամբ, որը հիմնվում էր ռազմաարդյունաբերության շվեդական և շվեյցարական մոդելների վրա՝ շեշտադրելով ռազմական, տնտեսական և սոցիալական գործոնների զարգացման վրա: Մինգապուրի տնտեսական աճի բարձր տեմպերը հնարավորություն տվեցին նպատակաուղղված ավելացնել երկրի ռազմական ծախսերը և բարենպաստ տնտեսական հենք ստեղծել երկրում տեխնոլոգիական առաջընթացի համար: Ներկայում Մինգապուրը ԳՀՓԿԱ ծախսերի և ՀՆԱ-ի հարաբերակցությամբ առաջատար տեղ է զբաղեցնում ոչ միայն տարածաշրջանում, այլև գերազանցում է մի շարք եվրոպական զարգացած պետությունների: Այսպես 2005-2014թթ.-ին այս ցուցանիշը մշտապես տատանվել է ՀՆԱ-ի 2.15%-ի շրջանակներում, ինչը գրեթե կրկնակի անգամ բարձր է զարգացած երկրների համաշխարհային միջինից: Երկրի ռազմական բազայի և ԳՀՓԿԱ ծախսերի ավելացման շնորհիվ, արդեն 21-րդ դարի սկզբին երկիրը

¹ Ugurhan Berkok, Christopher Penney, Karl Skogstad. Defence Industrial Policy Approaches and Instruments. July 2012, p. 68.

կարողացավ կազմակերպել ռազմամթերքի, փոքր ռազմանավերի և բարձր տեխնոլոգիաների հենքով ռազմական սարքավորումների և մեքենաների սեփական արտադրություն, ինչպես նաև՝ ռազմական տեխնիկա (ԱԹՄ-ներ, կապի միջոցներ և ռազմանավեր) արտահանել Եվրոպա և ԱՄՆ:

Ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման սկզբնական շրջանում Մինգապուրում հովանավորչական մեխանիզմներ էին կիրառվում՝ բացառելով օտարերկրյա կապիտալի մասնակցությունը և համատեղ ընկերությունների ստեղծումը: Ոլորտին հատկացվող պետական միջոցներն ուղղվում էին տնտեսական կլաստերների ստեղծմանը և գործող ընկերությունների խոշորացմանը, ինչի արդյունքում ստեղծվեցին մի շարք առաջատար ընկերություններ, օրինակ՝ ST Engineering հոլդինգի կազմում՝ ST Aerospace, ST Electronics, ST Kinetics և ST Marine ընկերությունները: Վերջիններիս առանձնահատկությունն այն է, որ դրանք մասնագիտացված են երկակի նշանակության ապրանքների արտադրությունում, ընդ որում, 2010 թ. տվյալներով այդ ընկերությունների վաճառքների միայն 40%-ն է բաժին ընկնում ռազմական արտադրանքին: Այս մոտեցումը հատուկ է Եվրոպական մի շարք երկրների (Շվեդիա, Գերմանիա) և ԱՄՆ-ին:

Արտադրության ոլորտում օտարերկրյա ընկերությունների մուտքի արգելքին զուգահեռ Մինգապուրը շարունակում է մեծ քանակությամբ ռազմական արտադրանք ներկրել Արևմուտքից՝ դրանց տեխնոլոգիական փոխանցման մեխանիզմների (լիցենզավորման և կրկնօրինակման) հենքով սեփական արդյունաբերություն կազմակերպելու նպատակով: Նման տարբերակով են զարգացել ռազմաարդյունաբերության համար կարևոր՝ ավիաշինության, նավաշինության և այլ ոլորտներ: Մինգապուրում համատեղ ընկերությունների ստեղծման արգելքը տեղական ընկերություններին ստիպեց ակտիվորեն ներգրավվել համաշխարհային գործընթացներին՝ գումարներ ներդնելով և նորարարական արտադրության միավորումներ ձևավորելով այլ պետություններում՝ ԱՄՆ-ում, Չինաստանում, Հվ. Կորեայում: Արդեն 2000-ական թթ. Մինգապուրյան ընկերությունները շուրջ 100 մասնաճյուղ ունեին 23 տարբեր երկրներում, ինչն էլ հնարավորություն ընձեռեց խթանել արտահանման գործընթացը և ներկայացնել Մինգապուրի ռազմական և քաղաքացիական արտադրանքը համաշխարհային շուկաներում: Օրինակ, ST Aerospace-ը ավիաարտադրանքի տեխնիկական սպասարկում իրականացնող խոշոր ընկերություն է աշխարհում (գրասենյակներ Ասիայում, Եվրոպայում և ԱՄՆ-ում), որը լիցենզավորման հիմունքներով կատարում է Boeing, Airbus, McDonnell Douglas ընկերությունների արտադրված ինքնաթիռների տեխնիկական սպասարկումը և միաժամանակ մասնագիտացած է ռազմական անօդաչու թռչող սարքերի արտադրությունում: Նմանատիպ կերպով են գործում նաև Մինգապուրի ռազմաարդյունաբերության ոլորտը ներկայացնող մյուս ընկերությունները՝ համատեղելով ռազմական և քաղաքացիական արտադրությունը արտահանման լայն կողմնորոշմամբ:

Մինգապուրի ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ընդգծել հետևյալ առանձնահատկությունները¹.

- Ռազմական ծախսերի բարձր տեսակարար կշիռ և կայունություն, որը, հիմնականում կրում է ներդրումային բնույթ, դրանով իսկ հնարավորություն տալով կարճ ժամանակում զարգացնել ռազմաարդյունաբերության կարևոր ուղղությունները, խթանել նրանց սպասարկող փոքր գիտատար ընկերությունների ստեղծումն ու զարգացումը: Սակայն, պետք է նկատել, որ ռազմական ծախսերի մեծ տեսակարար կշիռը հնարավոր դարձավ ապահովել հիմնականում Մինգապուրի տնտեսական աճի բարձր ցուցանիշների շնորհիվ, հետևաբար դա բացասական ազդեցություն չունեցավ բնակչության կենսամակարդակի վրա:

- Պետական նպատակաուղղված քաղաքականություն՝ ռազմաարդյունաբերության ոլորտում ինքնաբավ արտադրություն կազմակերպելու հարցում: Զարգացման սկզբնական շրջանը Մինգապուրի համար հատկանշվել է հարևան պետությունների հետ լարված հարաբերություններով և ծովահենության բարձր մակարդակով, ուստի սեփական ռազմական արտադրանքի թողարկումը պետության կողմից սկսեց դիտվել որպես կարևոր առաջնահերթություն: Ընտրվեց

¹ Adrian Kuah and Bernard Loo. Examining the defence industrialization – economic growth relationship: The case of Singapore. Institute of Defence and Strategic Studies, Singapore, 2004, p. 32.

ուրրտի կլաստերային զարգացման սկզբունքը, որը հետագայում համատեղվելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հետ, Մինգապուրին ոչ միայն դուրս բերեց միջազգային շուկաներ, այլև նպաստեց ռազմական արդյունաբերության, մարդկային կապիտալի և SS ոլորտի հիման վրա «պաշտպանական էկոհամակարգի» ստեղծմանը, որի շրջանակներում ապահովվում էր տնտեսության ռազմական ու քաղաքացիական ոլորտների միջև մարդկային կապիտալի, գիտելիքի և տեխնոլոգիաների արդյունավետ փոխանցման գործընթացը:

- Մարդկային կապիտալի զարգացման և փոքր գիտատար ընկերությունների ստեղծման պետական ֆինանսավորում: Կրթություն ստանալով արտասահմանյան առաջատար բուհերում տեխնիկական և բնական գիտությունների բնագավառում, ուսանողները հնարավորություն են ստանում մասնակցել ռազմաարդյունաբերության ոլորտում գործող նախագծերին, իսկ հետագայում նաև՝ հիմնադրել իրենց սեփական գիտատար ընկերությունները՝ նպաստելով երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտադրությանը:

- Զարգացման որոշակի մակարդակից հետո ռազմաարդյունաբերության ոլորտում զբաղված ընկերությունների ուղղակի պետական ֆինանսավորման դադարեցում, քանի որ զարգացման սինգապուրյան դոկտրինի համաձայն, պետական միջոցների վատնումը թույլ չտալու նպատակով, այս ոլորտում գործող ընկերություններն առաջին հերթին պետք է հանդես գան որպես կայուն և արդյունավետ տնտեսավարող սուբյեկտներ: Այս հանգամանքը ստիպեց ոլորտի ընկերություններին արտաքին ֆինանսավորման աղբյուրներ փնտրել բորսաներում՝ պարտքային գործիքների թողարկմամբ, ինչը բարձրացրեց նրանց գործունեության նկատմամբ հասարակության վստահությունը և հանգեցրեց միջոցների առավել արդյունավետ կառավարման և երկակի նշանակության ապրանքների արտադրության ավելացման:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները, նկատենք որ տնտեսական ռեսուրսների բացակայությամբ, տնտեսական ու ռազմական շրջափակմամբ պայմանավորված խնդիրները Մինգապուրի իշխանությունները լուծեցին տնտեսության մի շարք կարևոր ոլորտների փոխկապակցված զարգացման շնորհիվ: Մասնավորապես, ռազմաարդյունաբերության ոլորտում շեշտադրելով երկակի նշանակության ապրանքների արտադրության վրա, և զուգահեռ կերպով զարգացնելով տնտեսության նորարարական հատվածը, Մինգապուրը կարողացավ լուրջ հաջողությունների հասնել՝ ապահովելով բարձր տեխնոլոգիական արտադրության ներդրումը տնտեսության բոլոր ոլորտներում՝ որպես ռազմաարդյունաբերության զարգացման դրական արտաքին էֆեկտ:

Հարավային Կորեա: Հվ. Կորեայում ռազմական ծախսերի աննախադեպ բարձր աճի տեմպերը (1970-ական թթ.-ին 2.3 մլրդ ԱՄՆ դոլարից մինչև 38.6 մլրդ ԱՄՆ դոլար 2015թ.-ին) տնտեսագետների շրջանում լայն քննարկումների առիթ է հանդիսացել՝ դրանց նպատակահարմարության և բաց թողնված տնտեսական հնարավորությունների շուրջ, քանի որ սովորաբար պետության ռազմական ծախսերը պակաս արդյունավետ են դիտվում քաղաքացիական նշանակության պետական ծախսերի համեմատությամբ: Հվ. Կորեայում տնտեսության վրա ռազմական ծախսերի ազդեցության գնահատման բազմաթիվ հետազոտություններ կան: Դրանցից մեկում բացահայտվել է, որ 1975թ.-ից սկսած Կորեայի ռազմական տեխնոլոգիաները բարելավվել են 240%-ով՝ գերազանցապես այս ոլորտում կատարված պետական ծախսերի շնորհիվ: Մեկ այլ հետազոտությունում ուսումնասիրվել է Կորեայի ռազմաարդյունաբերության ազդեցությունը քաղաքացիական ոլորտի վրա՝ երեք հիմնական ուղղություններով՝ համախառն ազգային արդյունքի աճ, աշխատանքային հնարավորությունների ստեղծում և երկակի նշանակության տեխնոլոգիաների արտադրություն: Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ ռազմաարդյունաբերական արտադրանքի 1% աճը հանգեցրել է ՀԱԱ-ի 1.52%, ընդհանուր զբաղվածության 1.68% աճ, թեև քաղաքացիական տեխնոլոգիաների արտադրության վրա ազդեցությունը նշանակալի չի եղել¹:

Տնտեսական նման զարգացումների մեկնակետը կարելի է համարել 1970-ական թթ.-ը, երբ տնտեսական քաղաքականությունը թիրախավորեց կապիտալատար՝ մասնավորապես ծանր, քիմիական և ռազմական արդյունաբերության ճյուղերի զարգացումը, որոնք սահմանվեցին

¹ Lee, Yong Hak. Defense Industry And Its Impacts On Economic Growth In Korea. June, 1992, p. 10.

որպես զարգացման գերակա ուղղություններ: Թեթև արդյունաբերության ոլորտում ներդրումների կրճատման արդյունքում առաջացած ազատ դրամական միջոցների հաշվին երկրում զարգացում ապրեցին ծանր մեքենաշինությունը, նավաշինությունը և մետալուրգիան: Բացի այդ ռազմարդյունաբերության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցների հավաքագրման նպատակով ստեղծվեց ազգային ներդրումային ընկերություն, որտեղ բանկերի կողմից պարտադիր ներդրվում էր ներգրավված ավանդների որոշ մասը: Մեծ ուշադրություն էր դարձվում նաև բարձր որակավորում ունեցող մարդկային կապիտալի ներգրավմանը արտասահմանից, մասնավորապես ԱՄՆ-ից: Արդյունքում ձևավորվեց ռազմարդյունաբերության զարգացման բավարար հենք՝ միջազգային շուկայում մրցունակ ապրանք արտադրելու և արտահանման կողմնորոշում որդեգրելու համար, քանի որ կորեական շուկան բավական փոքր էր մեծ թվով ընկերությունների արտադրանքն իրացնելու տեսանկյունից: Ներկայում Հվ. Կորեայի ռազմական արտադրանք թողարկող ընկերություններից 5-ը գտնվում են աշխարհի խոշորագույն 100 ընկերությունների ցանկում՝ շուրջ 6.4 մլրդ ԱՄՆ դոլար տարեկան ընդհանուր շրջանառությամբ (2015թ):

Կորեական արտադրանքն առավել մրցունակ դարձնելու համար պետության կողմից սահմանվեց այս ոլորտում գործող ընկերությունների տնտեսական արտոնությունների փաթեթ, որն ընդգրկում էր շուկայականից 4% ցածր տոկոսադրույքով արտաքին ֆինանսավորում ներգրավելու հնարավորություն, արտահանման պետական երաշխիքների տրամադրում, ոլորտում աշխատողներին ռազմական ծառայությունից ազատում և այլն: Արդյունքում կտրուկ աճեց ոլորտում գործող ինչպես խոշոր արդյունաբերական, այնպես էլ փոքր գիտատար ընկերությունների թիվը: Գործընթացն արագացնելու նպատակով երկրում 10%-ով բարձրացվեց եկամտահարկն ու շրջանառության հարկը, որից ստացված միջոցները պետք է ուղղվեին ռազմական ծրագրերի իրականացմանը: Նկատենք, որ Կորեայում ԳՀՓԿԱ ծախսերի մեծ մասը իրականացվում է այս հարկատեսակի շնորհիվ, իսկ ՀՓԿԱ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությամբ Կորեան առաջատարն է աշխարհում. ցուցանիշը տարիներ շարունակ գերազանցում է զարգացած երկրների միջին ցուցանիշը 4, իսկ լավագույն ցուցանիշները՝ 2 անգամ, 2014թ-ին կազմելով 4.29%: Տնտեսական ռեսուրսների մեծ հոսքը, սակայն հանգեցրեց ոլորտում մրցակցության բարձր մակարդակի, որը թեև տնտեսական տեսանկյունից դրական է, սակայն սահմանափակ շուկայում մեծ կշիռ ունենալու նպատակով ընկերությունները սկսեցին դիվերսիֆիկացնել իրենց արտադրանքը, ինչն էլ սահմանափակեց մասշտաբի էֆեկտի և մասնագիտացման շնորհիվ հնարավոր արտադրանքի բարելավման հնարավորությունները: Ի տարբերություն Մինգապուրի, Հվ. Կորեայի ռազմարդյունաբերության ոլորտում չկայացավ նաև զարգացած երկրներից տեխնոլոգիական տրանսֆերի գործընթացը, ինչը ստիպեց Կորեայի իշխանություններին մեծ ֆինանսական միջոցներ հատկացնել ազգային գիտահետազոտական կենտրոններին՝ սեփական ռազմական արտադրանք նախագծելու նպատակով:

Հատկանշական է, որ Կորեան ծանր արդյունաբերության ոլորտին զուգահեռ մեծ ուշադրության դարձրեց նաև էլեկտրոնիկայի և բարձր տեխնոլոգիաների ոլորտներին և դրանց համատեղ կիրառությանը ռազմարդյունաբերության ոլորտում: Ավելին, ռազմարդյունաբերության ոլորտի զարգացումը հանգեցրեց որակավորված աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճին¹: Վերափոխվեց նաև մարդկային կապիտալի դերը, ստեղծվեցին զարգացման նոր հնարավորություններ արտասահմանյան կրթություն (դպրոցական լավագույն 1% աշակերտներին առաջարկվում է արտասահմանյան կրթություն, հետագայում ռազմարդյունաբերության ոլորտում աշխատելու պայմանով), ազգային կրթական համակարգի բարեփոխումներ ուղղված ինժեներների, ՏՏ մասնագետների և որակյալ կառավարիչների պատրաստմանը: Մեծ ուշադրություն էր դարձվում նաև օտարերկրյա մասնագետների ներգրավմամբ ուղեղների ներհոսքին, մասնավորապես Կորեայի տեխնոլոգիական համալսարաններում կտրուկ աճեց հրավիրված դասախոսական անձնակազմը, խրախուսվում էր նաև այլ երկրներում աշխատող բարձր որակավորում ունեցող

¹ Lee D. Olvey, James R. Golden, and Robert C. Kelley, *The Economics of National Security* (Wayne, NJ, Avery Publishing Group, 1984).

կորեացի մասնագետների վերադարձը: Մարդկային կապիտալի ներհոսքը նպաստեց ոչ միայն ռազմաարդյունաբերության զարգացմանը, այլև տնտեսական մեծ հնարավորություններ ստեղծեց մյուս ոլորտների կայուն զարգացման համար (քաղաքացիական նշանակության այնպիսի արտադրական ոլորտներում, ինչպիսիք են ավտոմոբիլաշինությունը, էլեկտրոնիկան և նորարարական տեխնոլոգիաների ոլորտը):

Այսպիսով, կարելի է փաստել, որ Հվ. Կորեայի ռազմաարդյունաբերության զարգացումը զգալի դրական ազդեցություն է ունեցել ամբողջ տնտեսության համար: Ըստ Ադրիան Կյուայի հետազոտության արդյունքների, ռազմաարդյունաբերության ոլորտում կատարված ԳՀՓԿԱ ծախսերի միջինում 1 կետով ավելացումը 3 կետով ավելացնում է տեղեկատվական, նավաշինության և ռազմամթերքի արտադրության ցուցանիշները¹: Իհարկե, ըստ նույն հետազոտության արդյունքների ինովացիոն ոլորտի զարգացումը իրենից ենթադրում է ոչ միայն ԳՀՓԿԱ ծախսերի ավելացում, այլև նպատակաուղղված ազգային ինովացիոն համակարգի կայացում, ինչն էլ կատարվեց Հվ. Կորեայի իշխանությունների կողմից հետագա տարիների ընթացքում:

Թեև Հվ. Կորեայի ռազմաարդյունաբերությունն այսօր համարվում է ամենամրցունակներից մեկն աշխարհում, այնուամենայնիվ, այն շարունակական կատարելագործման մարտահրավերներ ունի: Մասնավորապես, այս ոլորտի զարգացման նպատակով երկրում բավարար կերպով չի խթանվում պետական ինստիտուտների, խոշոր արդյունաբերական կառույցների և փոքր գիտատար ընկերությունների սերտ համագործակցումը, ինչի արդյունքում տեղի է ունենում ռեսուրսների անարդյունավետ օգտագործում նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման փուլում, երբ դրանով զբաղվում են միաժամանակ մի քանի ընկերություններ: Բացի այդ, ռազմաարդյունաբերության ոլորտի խոշոր ընկերությունները գործում են հիմնականում պետական ֆինանսավորմամբ, մինչդեռ ոլորտի զարգացման Մինգապուրի փորձը ցույց է տալիս, որ մասնավոր կապիտալի ներգրավմանն ուղղված ընկերությունների քայլերն ակնհայտորեն բարձրացրել են դրանց գործունեության արդյունավետությունը: Ցածր է նաև երկակի նշանակության ապրանքների արտադրության տեսակարար կշիռն ամբողջ արտադրության մեջ, ինչը նվազեցնում է տեխնոլոգիաների և գիտելիքի փոխանցման հնարավորությունները տնտեսության տարբեր ոլորտների միջև:

Վերոնշյալ երկրներում ռազմաարդյունաբերական համալիրի կայացման փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսական զարգացման գործընթացներում ռազմական ծախսերի արդյունավետությունը պայմանավորվում է տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի հստակ պլանավորմամբ, որի շրջանակներում ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը պետք է զուգորդվի տվյալ երկրում մրցակցային առավելություններ ապահովող ճյուղերի զարգացմամբ: Հայաստանի ներկա տնտեսական իրողություններն առավելապես պահանջում են ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացումը զուգորդել տնտեսության այլ ոլորտների զարգացման հետ (քիմիական արդյունաբերություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ռոբոտաշինություն և այլն): Նման մոտեցումը թույլ կտա՝ մի կողմից ինովացիոն լուծումներով ապահովել ռազմաարդյունաբերական համալիրի արդյունավետությունը, մյուս կողմից՝ կխթանի ռազմաարդյունաբերության ոլորտի կողմից երկրում ստեղծվող արտադրանքի (այդ թվում և ինովացիոն ապրանքների) նկատմամբ գնողունակ պահանջարկի ձևավորումը: Ինչպես ցույց տրվեց վերոնշյալ երկրների փորձի ուսումնասիրմամբ, այս ճանապարհին երկրին հասանելի և միջազգային փորձով հիմնավորված գործիքները բազմազան են, սակայն նրանց արդյունավետ կիրառումը իրենից ենթադրում է ինովացիոն լուծումների հստակ ուղղվածությամբ տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարության առկայություն:

¹ *Adrian Kuah and Bernard Loo*. Examining The Defence Industrialization-Economic Growth Relationship: The Case of Singapore. 2004.

ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՄԵՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԷԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

ՎԱՐՎԱԳՆ ՌԱՖԱԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆ, տ.գ.թ.,

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող*

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված են ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման առանձնահատկությունները փոքր բաց տնտեսություններում՝ Իսրայել, Սինգապուր, Հվ. Կորեա: Հոդվածի նպատակն է բացահայտել ռազմաարդյունաբերության կայացման և տնտեսական աճի փոխկապվածությունները և հաջողված միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում: Հոդվածում ցույց է տրվում, որ ոլորտի զարգացման ճանապարհին երկրին հասանելի գործիքների արդյունավետությունը մեծապես կախված է երկրում ինովացիոն լուծումների հստակ ուղղվածությամբ տնտեսական քաղաքականության առկայությունից:

Բանալի բառեր. Ռազմաարդյունաբերություն, ռազմական ծախսեր, տնտեսական աճ, նորարարական զարգացում, ԳՀՓԿԱ ծախսեր:

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ СТРАН, ДОБИВШИХСЯ ЗНАЧИТЕЛЬНОГО УЛУЧШЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА НА ОСНОВЕ РАЗВИТИЯ ВОЕННО-ПРОМЫШЛЕННОЙ ОТРАСЛИ

ՎԱԳՆ ՐԱՖԱԵԼՈՎԻՇ ՍՈՍՅԱՆ, Կ.Յ.Ո.

младший научный сотрудник Института экономики им. Котаняна НАН РА

Аннотация

В статье рассматриваются особенности развития военно-промышленного сектора стран с малой открытой экономикой (Израиль, Сингапур, Южная Корея). Целью статьи является выявление взаимосвязи между процессом становления военной промышленности и экономическим ростом, а также возможностей локализации успешного международного опыта в Армении. В статье показано, что эффективность инструментов, доступных стране на пути развития сектора, во многом зависит от наличия в стране экономической политики, четко ориентированной на инновационные решения.

Ключевые слова: военная промышленность, военные расходы, экономический рост, инновационное развитие, расходы на НИОКР.

EXPERIENCE OF COUNTRIES THAT HAVE REPORTED A SIGNIFICANT ECONOMIC GROWTH BY DEVELOPING THE MILITARY-INDUSTRIAL SECTOR

VAHAGN RAFAEL POGHOSYAN, Ph.D. in Economics

*Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia*

Abstract

The article discusses the characteristics of development of the military-industrial sector in small open economies countries (Israel, Singapore, and South Korea). The purpose of the article is to identify the interplay of the process of formation and building the military industry with the economic growth, and possibilities of applying and introducing the best international practice in Armenia. The article shows that the efficacy of the instruments available in a given nation to develop this sector of economy largely depends on the availability of economic policy clearly oriented at generating, providing innovation solutions.

Keywords: Military industry, military spending, economic growth, innovative development, R&D spending